ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Երևան 26 Օգոստոսի 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացում մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **«ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/07»**

Մասնակից՝ **«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ**

(ՀՎՀՀ՝ 02656691, գործունեության հասցե՝ ք. Երևան, Քաջազնունի փ. 11/23)

ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կարիքների համար անխափան սնուցման աղբյուրի ձեռքբերման նպատակով 2024 թվականի հունիսի 26-ին հրապարակված «ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/07» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ ներկայացրած միակ մասնակից «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից) էլեկտրոնային աճուրդի արդյունքում թիվ 1 չափաբաժնի մասով առաջին տեղ է զբաղեցրել: Ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի 10.07.2024թ. կայացած նիստում Մասնակցի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին համապատասխան՝ բավարար և որոշվել է նրան թիվ 1 չափաբաժնով ճանաչել ընտրված մասնակից և նրա հետ կնքել պայմանագիր: Սահմանված կարգով և ժամկետներում էլեկտրոնային աճուրդի e-auction համակարգով մասնակցին տրվել է շնորհում:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2024 թվականի օգոստոսի 14-ին ներկայացված գրության համաձայն «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ն գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապակցված է «Էսզեթ ֆարմ» ՍՊԸ-ի հետ, որը 06.05.2023թ. մինչև 20.06.2025թ. ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Նշվածի վերաբերյալ տեղեկատվություն առկա է նաև Ծառայությունում՝ միմյանց հետ փոխկապակցված՝ «ԱՆՆԱՐԿԱ» (ՀՎՀՀ՝ 02656691), «Էսզեթ ֆարմա» (ՀՎՀՀ՝ 00433863) և «Էսզեթ ֆարմ» (ՀՎՀՀ՝ 00498192) ՍՊ ընկերությունների կողմից հանրային գնումների գործընթացներին ոչ բարեխիղճ վարք դրսևորելու վերաբերյալ իրականացված մշտադիտարկման շրջանակներում: Մասնավորապես, արձանագրվել է և օպերատիվ տեղեկատվության հիման վրա հիմնավորվել է, որ ընկերությունները փոխկապակցված են, քանի որ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի՝ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

Միևնույն ժամանակ, Կարգի՝

- 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:

- 32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերության համաձայն մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին.

- 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Փաստացի, 06.05.2023թ. մինչև 20.06.2025թ. ընկած ժամանակահատվածում «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը գնումների գործընթացին սահմանափակված է, ուստի նրա մասնակցությունը Ընթացակարգին որակվել է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտում:

Ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի 15.08.2024թ. կայացած արտահերթ նիստում որոշվել է

- չեղյալ հայտարարել գնահատող հանձնաժողովի 10.07.2024թ. կայացած նիստում ընդունված որոշումը, այն է՝ «աճուրդի արդյունքում առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ին թիվ 1 չափաբաժնով ճանաչել ընտրված մասնակից և նրա հետ կնքել պայմանագիր»:

- Մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատել հրավերի պահանջներին անհամապատասխան՝ անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը:

- Անվավեր ճանաչել 10.07.2024թ. հրապարակված պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

- Գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ **որոշում եմ** «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Անի Բաղդասարյան

Կատարող՝ Անի Ախոյան
Ստորաբաժանում՝ Գործերի կառավարման և գնումների կազմակերպման բաժին
Հեռ.՝ 010-31-31-82